ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/23»

ք. Երևան «04» 04 2018 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեյսմշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Բունիաթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց տարածքների վավերագրման և ուսումնասիրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով ենթապատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N

3.1) [redacted] էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): [redacted] որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն [redacted] սյունակները, որոնք վերաբերում lib իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված [redacted] www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» [redacted]

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

[redacted].Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 3 760 000 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 1 880 000 (մեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

2-րդ չափաբաժին՝ 1 880 000 (մեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման

արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Unyt պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգտուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Unyt պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական վարչությունում	«Սեյսմշին» ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող. 21/3ա էլ.հասցե՝ info@seismshin.am Հեռ.՝ (060) 65 18 00, (041) 188 180 ՀՎՀՀ 04227903, հ/հ 163048109645 «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, «Սպանդարյան» Մ/Ճ
Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն՝ Ն. Բունիաթյան (ստորագրություն)

Հավելված թիվ 1
« 04 » 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԱ

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի և դրա տարածքի վավերագրման և ուսումնասիրման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը*
1	71241200-7	դրամ			1	ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 3, Կառավարական տուն 2	30 հունիսի 2018 թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

I.Վավերագրման և ուսումնասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները՝ **Աղյուսակ N** 1

II. Առդիր նյութեր և տվյալներ (թղթային և/կամ էլեկտրոնային)՝ **Աղյուսակ N** 2

ԱՂՅՈՒՍԱԿ N 1՝ Վավերագրման և ուսումնասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները

Հ/հ	Նախատեսվող աշխատանքի անվանումը	Աշխատանքի համառոտ նկարագրությունը	Աշխատանքի կատարման պահանջներ			
			Մասնագիտական	Որակական	Համաձայնեցում	Այլ
	1	2	3	4	5	6
1	Մատենագրական, արխիվային և գիտահետազոտական աղբյուրներից նյութերի հավաքում	հուշարձանի վերաբերյալ արխիվային նյութերի և հրատարակություններում առկա տեղեկությունների ուսումնասիրում, դասակարգում, վերլուծում	աշխատանքային խումբ՝ պատմաբան (հնագետ, վիմագրագետ), ճարտարապետ, ազգագրագետ	տեղագրական, պատմական, ճարտարապետական, ազգագրական (խնդիրների լուսաբանմանը նպաստող)	չի պահանջվում	Ներկայացնել թղթային՝ 2 օրինակ, էլեկտրոնային՝ 1 օրինակ
2	վերգետնյա հետազոտում, հետախուզական ու հնագիտական պեղումներ,	հուշարձանի նախնական վիճակի հնարավորինս ճեռք բերված փաստերի ճշգրտություն և	արշավախումբ՝ տվյալ դարաշրջանի մասնագետ-հնագետ, ճարտարապետ, գեոդեզիստ և ըստ	ընթեռնելի մասշտաբով, բոլոր հիմնական տարբերակումների և	**Սահմանված կարգով*** լիազորված մարմին	Ներկայացնել թղթային՝ 2 օրինակ, էլեկտրոնային՝ 1

	տեխնիկական կամ բնագիտական մեթոդներով հուշարձանի վավերագրման և հետազոտման աշխատանքներ		ամբողջականություն, ինչպես նաև դրանց համակողմանի մեկնաբանման գիտական արժեք, հայտնաբերված գտածոների անվտանգության ապահովում տեղահանույթի կազմում, չափագրում (ամբողջական՝ մետրային, անհրաժ. դեպքում՝ նաև ֆոտոգրանոմետրիկ), լուսանկարում	անհրաժեշտության՝ աշխատանքներում ներգրավվել նաև համապատասխան այլ մասնագետներ (լուսանկարիչ, հուշարձանի և հնագիտական գտածոների ամրակայող-վերականգնող, նկարիչ, հնամարդաբան, հնակենդանաբան, հնաբուսաբան, երկրաբան և այլն)	չափերի տեղադրմամբ, տեղային ուսումնասիրության ամբողջ ընթացքը պարբերաբար գրառել դաշտային օրագրում,	ներկայացնել պեղման հայտը, ստանալ թույլտվություն և ավարտից հետո ներկայացնել պեղումների մասին գիտական ամփոփ հաշվետվություն	օրինակ, հայտնաբերված գտածոները ոչ ուշ, քան 2 տարվա ընթացքում, հանձնել համապատասխան պետական թանգարան
3	Ինժեներական հետազոտություններ	կոնստրուկտորական	ինժեներաերկրաբանական եզրակացություն տեղի գրունտներում առկա ջրերի և դրանց հնարավոր բարձրացման նիշերի վերաբերյալ	Ինժեներ-կոնստրուկտոր	ըստ նորմատիվ պահանջների՝ հաշվարկներ, վերլուծություն, եզրակացություն	չի պահանջվում, ամփոփ տվյալները ներառել Տեխնիկական վիճակի մասին ակտում	ներկայացնել թղթային՝ 2 օրինակ, էլեկտրոնային՝ 1 օրինակ
		Նյութագիտական	եզրակացություն բաղնիքի կառուցվածքում կիրառված նյութերի /շարվածք, հատակ, խողովակաշար/ վերաբերյալ	Ինժեներ-նյութագետ	ըստ նորմատիվ պահանջների՝ նյութերի ուսումնասիրում (այդ թվում՝ լաբորատոր) եզրակացություն		
4	Տեխնիկական վիճակի մասին ակտի կազմում		վավերագրման տվյալների և ուսումնասիրությունների արդյունքների համադրմամբ՝ հուշարձանի վիճակի (առկա խնդիրների) գնահատում	մասնագիտական խմբով (1-3 կետերով պահնջվող մասնագետների մասնակցությամբ)	համաձայն կից ձևաչափի (կարող է աշխատախմբի կողմից առաջարկվել դրույթների լրացում)	տեխնիկական վիճակի մասին ակտը ներկայացնել լիազորված մարմին	ներկայացնել թղթային՝ 2 օրինակ, էլեկտրոնային՝ 1 օրինակ

*** ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված** «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման» կարգ, ՀՀ մշակույթի նախարարի 2012 թ. հունվարի 26-ի N19-Ա հրամանով հաստատված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների հետախուզման և պեղման աշխատանքների իրականացման համար թույլտվություն տալու» ընթացակարգ:

ԱՂՅՈՒՍԱԿ N 2՝ Առդիր նյութեր և տվյալներ (թղթային և/կամ էլեկտրոնային)

Հ/հ	Անվանումը	Էջերի քանակը	Ծանոթություն
1	Պահպանական գոտի	1 թերթ	ծանոթանալ ՀՀ ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում
2	Տեխնիկական վիճակի մասին ակտի ձևանմուշ	2 թերթ	կցվում է
3	Գլխավոր հատակագիծ, հատակագիծ և ճակատ /լուսանկարված/	լուսանկարներ՝ 3 թերթ	կցվում է

4	Նախարարությունում /«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ/ առկա տվյալներ	ցանկ՝ 1 թերթ	Կցվում է
5	ՀՀ մշակույթի նախարարի 2012 թ. հունվարի 26-ի N19-Ա հրամանով հաստատված ընթացակարգ	թղթային	ծանոթանալ ՀՀ ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011018935
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար

_____ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սեյսմշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ,
Օգոստոսի 23 փող. 21/3ա
էլ.հասցե՝ info@seismshin.am
Հեռ.՝ (060) 65 18 00, (041) 188 180
ՀՎՀՀ 04227903, հ/հ 163048109645
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, «Սպանդարյան» Մ/Ճ

_____ **Ն. Բունիաթյան**
(ստորագրություն)

Չափաբաժին N 2

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի 13-րդ դարի եկեղեցու և դրա տարածքի վավերագրման և ուսումնասիրման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը*
2	71241200-8	դրամ			1	ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 3, Կառավարական տուն 2	30 հունիսի 2018 թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

I.Վավերագրման և ուսումնասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները՝ **Աղյուսակ N 1**

II. Նախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներին ներկայացվող պահանջները՝ **Աղյուսակ N 2**

ԱՂՅՈՒՍԱԿ N 1՝ Վավերագրման և ուսումնասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները

Հ/հ	Նախատեսվող աշխատանքի անվանումը	Աշխատանքի համառոտ նկարագրությունը	Աշխատանքի կատարման պահանջներ			
			Մասնագիտական	Որակական	Համաձայնեցում	Այլ
	1	2	3	4	5	6
1	Մատենագրական, արխիվային և գիտահետազոտական աղբյուրներից նյութերի հավաքում	հուշարձանի վերաբերյալ արխիվային նյութերի և հրատարակություններում առկա տեղեկությունների ուսումնասիրում, դասակարգում, վերլուծում	աշխատանքային խումբ՝ պատմաբան (հնագետ, վիմագրագետ), ճարտարապետ, ազգագրագետ	տեղագրական, պատմական, ճարտարապետական, ազգագրական (խնդիրների լուսաբանմանը նպաստող)	չի պահանջվում	ներկայացնել թղթային՝ 2 օրինակ, էլեկտրոնային՝ 1 օրինակ
2	վերգետնյա հետազոտում, հետախուզական ու հնագիտական պեղումներ, տեխնիկական կամ բնագիտական	հուշարձանի նախնական վիճակի հնարավորինս ձեռք բերված փաստերի ճշգրտություն և ամբողջականություն, ինչպես նաև դրանց համակողմանի	արշավախումբ՝ տվյալ դարաշրջանի մասնագետ-հնագետ, ճարտարապետ, գեոդեզիստ և ըստ անհրաժեշտության՝ աշխատանքներում	ընթեռնելի մասշտաբով, բոլոր հիմնական տարբերակումների և չափերի տեղադրմամբ,	**Սահմանված կարգով*** լիազորված մարմին ներկայացնել	ներկայացնել թղթային՝ 2 օրինակ, էլեկտրոնային՝ 1 օրինակ, հայտնաբերված

	մեթոդներով հուշարձանի վավերագրման և հետազոտման աշխատանքներ		մեկնաբանման գիտական արժեք, հայտնաբերված գտածոների անվտանգության ապահովում տեղահանույթի կազմում, չափագրում (ամբողջական՝ մետրային, անհրաժ. դեպքում՝ նաև ֆոտոգրանոմետրիկ), լուսանկարում	ներգրավվել նաև համապատասխան այլ մասնագետներ (լուսանկարիչ, հուշարձանի և հնագիտական գտածոների ամրակայող-վերականգնող, նկարիչ, հնամարդաբան, հնակենդանաբան, հնաբուսաբան, երկրաբան և այլն)	տեղային ուսումնասիրության ամբողջ ընթացքը պարբերաբար գրառել դաշտային օրագրում,	պեղման հայտը, ստանալ թույլտվություն և ավարտից հետո ներկայացնել պեղումների մասին գիտական ամփոփ հաշվետվություն	գտածոները ոչ ուշ, քան 2 տարվա ընթացքում, հանձնել համապատասխան պետական թանգարան
3	Ինժեներական հետազոտություններ	կոնստրուկտորական	ինժեներաերկրաբանական եզրակացություն տեղի գրունտներում առկա ջրերի և դրանց հնարավոր բարձրացման նիշերի վերաբերյալ	Ինժեներ-կոնստրուկտոր	ըստ նորմատիվ պահանջների՝ հաշվարկներ, վերլուծություն, եզրակացություն	չի պահանջվում, ամփոփ տվյալները ներառել Տեխնիկական վիճակի մասին ակտում	ներկայացնել թղթային՝ 2 օրինակ, էլեկտրոնային՝ 1 օրինակ
		նյութագիտական	եզրակացություն կառուցվածքում կիրառված նյութերի վերաբերյալ	Ինժեներ-նյութագետ	ըստ նորմատիվ պահանջների՝ նյութերի ուսումնասիրում (այդ թվում՝ լաբորատոր) եզրակացություն		
4	Տեխնիկական վիճակի մասին ակտի կազմում		վավերագրման տվյալների և ուսումնասիրությունների արդյունքների համադրմամբ՝ հուշարձանի վիճակի (առկա խնդիրների) գնահատում	մասնագիտական խմբով (1-3 կետերով պահանջվող մասնագետների մասնակցությամբ)	համաձայն կից ձևաչափի (կարող է աշխատախմբի կողմից առաջարկվել դրույթների լրացում)	տեխնիկական վիճակի մասին ակտը ներկայացնել լիազորված մարմին	ներկայացնել թղթային՝ 2 օրինակ, էլեկտրոնային՝ 1 օրինակ

*** ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշմամբ հաստատված** «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման» կարգ, ՀՀ մշակույթի նախարարի 2012 թ. հունվարի 26-ի N19-Ա հրամանով հաստատված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու հատուկ պահպանվող պատմամշակութային տարածքների հետախուզման և պեղման աշխատանքների իրականացման համար թույլտվություն տալու» ընթացակարգ:

ԱՂՅՈՒՍԱԿ N 2՝ Առդիր նյութեր և տվյալներ (թղթային և/կամ էլեկտրոնային)

Հ/հ	Անվանումը	Էջերի քանակը	Ծանոթություն
1	Պահպանական գոտի	1 թերթ	ծանոթանալ ՀՀ ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում
2	Տեխնիկական վիճակի մասին ակտի ձևանմուշ	2 թերթ	կցվում է
3	Հատակագիծ, ճակատ, կտրվածք և հանգույցներ /լուսանկարված/	լուսանկար՝ 1 թերթ	կցվում է
4	Նախարարությունում /«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ/ առկա տվյալներ	ցանկ՝ 1 թերթ	Կցվում է

5	ՀՀ մշակույթի նախարարի 2012 թ. հունվարի 26-ի N19-Ա հրամանով հաստատված ընթացակարգ	թղթային	ծանոթանալ ՀՀ ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում

- *աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011018943
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

Մ. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սեյսմշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ,
Օգոստոսի 23 փող. 21/3ա
էլ.հասցե՝ info@seismshin.am
Հեռ.՝ (060) 65 18 00, (041) 188 180
ՀՎՀՀ 04227903, հ/հ 163048109645
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, «Սպանդարյան» Մ/Ճ

Տնօրեն՝

Ն. Բունիաթյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2
« 04 » 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200-7	ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի բաղնիքի և դրա տարածքի վավերագրման և ուսումնասիրման աշխատանքներ	0	0	0	122200	244400	376000	686200	996400	1316000	1504000	1692000	1880000	**1880000**
2	71241200-8	ՀՀ Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի 13-րդ դարի եկեղեցու և դրա տարածքի վավերագրման և ուսումնասիրման աշխատանքներ	0	0	0	122200	244400	376000	686200	996400	1316000	1504000	1692000	1880000	**1880000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գնումների վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սեյսմշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ,
Օգոստոսի 23 փող. 21/3ա
էլ.հասցե՝ info@seismshin.am
Հեռ.՝ (060) 65 18 00, (041) 188 180
ՀՎՀՀ 04227903, հ/հ 163048109645
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, «Սպանդարյան» Մ/Ճ

Տնօրեն՝

_____ Ն. Բունիաթյան
(ստորագրություն)

Հավելված թիվ 3
« 04 » 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

«Սեյսմշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող. 21/3ա
էլ.հասցե՝ info@seismshin.am
Հեռ.՝ (041) 188 180, (060) 65 18 00
ՀՎՀՀ 04227903, հ/հ 163048109645
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, «Սպանդարյան» Մ/Ճ

Պատվիրատու

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

a » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» •_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» •_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված թիվ 3.1
« 04 » 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/23» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն